

ԼԵԶՎԱԿԱՆ ՎԱՐՔԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

(ըստ ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿՀԱՐՔՅԱՆ ԷՔՆՈՍՏԵՐԻՈԼՈԳԻԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԻ ԵՄԵՐՆԵՐԻ)

ՀԱՄԱՐԱԲՈՒՄ ԴԱԼՍՏՅԱՆ

Հաղորդակցության կարևորագույն միջոց լինելով, լեզուն նաև էթնիկական ընդհանրության գոյության կարևոր նախադրյալ է և, հաճախ, նույնիսկ նույնացվում է էթնիկական պատկանելության հետ, ինչպես որ եղավ 1897 թ. Ռուսական կայսրության անդրանիկ մարդահամարի ժամանակ¹:

Լեզվի ուսումնասիրությունը հարուստ նյութ է տալիս ժողովուրդների էթնիկական պատմության վերաբերյալ:

Մեր օրերում տեղի ունեցող ազգային պրոցեսները (համախմբում, մերձեցում և այլն) անխուսափելիորեն ընթանում են նաև լեզվի ոլորտում, ուստի և էթնոլեզվական պրոցեսների վերլուծությունը կարևոր նյութ կարող է տալ այդ պրոցեսների ուսումնասիրության և դրանց գիտական կառավարման համար: Եվ ընդհակառակը, գիտականորեն չհիմնավորված մոտեցումը լեզվի հարցերին ընդունակ է առաջ բերելու անցանկալի հետևանքներ:

Էթնոլեզվական պրոցեսների ուսումնասիրությունն առավել արդիական է բազմազգ Սովետական Միությունում, ուր ապրում է ալիքի քան հարյուր էթնիկական ընդհանրություն: Ու թեև տարբեր ժողովուրդների և նրանց առանձին խմբերի մեջ տարածված է բազմալեզվությունը, այնուամենայնիվ էթնոլեզվական պրոցեսների ամենաբնորոշ ձևը մեր երկրում երկլեզվությունն է, երբ որպես հաղորդակցման միջոց են ծառայում տվյալ էթնիկական միավորի մայրենի լեզուն և ռուսերենը: Ռուսերենի, որպես ազգամիջյան հաղորդակցության լեզվի, ընտրությունը օրինաչափ է և, կարծում ենք, բացատրվում է երկու հիմնական պատճառներով: Նախ նրանով, որ ռուսերենը մեր երկրի բնակչության բացարձակ մեծամասնության մայրենի լեզուն է: 1979 թ. մարդահամարի տվյալների համաձայն՝ ռուսերենը որպես մայրենի լեզու նշել է 153,5 միլիոն մարդ կամ բնակչության 63,5 տոկոսը²: Երկրորդ, ֆունկցիոնալ զարգացման առումով ռուսերենը լիովին բավարարում է ազգամիջյան հաղորդակցության լեզվին անհրաժեշտ բոլոր պահանջները:

Մեր երկրում երկլեզվության էթնոսոցիոլոգիական ուսումնասիրությունների սկիզբը դրվել է 1960-ական թվականների վերջին, երբ ՍՍՀՄ ԳԱ ազգագրության ինստիտուտը սկսեց «ՍՍՀՄ-ում ազգերի զարգացման և մերձեցման սոցիալ-մշակութային պայմանների բարելավումը» ընդհանուր ծրագրով համամիութենական ուսումնասիրությունը³: Այդ ծրագրի շրջանակներում էթնոլեզվական պրոցեսներն ուսումնասիրվել են երկրի տարբեր ազգային շրջաններում: Ինչպես իրավացիորեն նշում են Ս. Ի. Բրուկեր և Մ. Ն. Գուբոգլոն,

¹ «Современные этнические процессы в СССР», М., 1977, с. 37.

² «Население СССР. По данным всесоюзной переписи населения», 1979, М., 1980.

³ Ուսումնասիրության ծրագրի մասին տես Ю. В. Арутюнян, Социально-культурные аспекты развития и сближения наций в СССР (программа, методика и перспективы исследования, «Советская этнография» (далее СЭ), 1972, № 3).

նմանօրինակ ուսումնասիրությունները «թույլ են տալիս էթնիկական պրոցեսներին և ազգային հարաբերությունների այլ կողմերից զատ ուսումնասիրել նաև երկլեզվության իրական չափերը տարբեր դասակարգային և սոցիալ-մասնագիտական խմբերում, առաջին և երկրորդ լեզուների հարաբերությունները խոսքի մեջ, երկլեզվության սոցիալ-մշակութային և այլ կարգի պայմաններն ու հետևանքները»⁴:

Ասածի լույսի տակ բավական կարևոր է նաև հայերի մեջ էթնոլեզվական պրոցեսների ուսումնասիրությունը. ընդ որում, երկու տեսանկյունով՝ սեփական էթնիկական միջավայրում և օտար էթնոսի մեջ⁵:

Հայաստանը ամենամիատարր ազգային հանրապետությունն է ՍՍՀՄ-ում և ուսիական էթնիկական միջավայրում մայրենի լեզվի կորուստը հայերի մեջ աննշան է՝ 0,6 տոկոս: Միևնույն ժամանակ ՍՍՀՄ մյուս ժողովուրդների միջավայրում մայրենի լեզուն կորցնելու հարցում հայերը զիջում են միայն բելոռուսներին և ուկրաինացիներին: Բացի այդ, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև ՀՍՍՀ-ում երկլեզվության լայն տարածումը՝ 34,2 տոկոս: Առ բավական բարձր ցուցանիշ է, եթե հաշվի առնենք, որ Հայաստանում ուսուցիչներ տարածվում է ոչ անմիջական շփման ճանապարհով:

Սոցիոլոգիական տեսանկյունից երկլեզվությունը կարելի է դիտել երեք կտրվածքով. ա) լեզվական իրավասություն, բ) լեզվական վարք, գ) լեզվական կողմնորոշում:

Ներկա հոլովածում քննվում են լեզվական վարքի հետ կապված հարցեր: Խնդիրը պարզաբանվում է ըստ Երևանի բնակչության էթնոսոցիոլոգիական ուսումնասիրության նյութերի, որն անցկացրել է ՀՍՍՀ հնագիտության և ազգագրության ինստիտուտի էթնոսոցիոլոգիայի բաժինը⁶:

Լեզվական վարքն անհատի կողմից կենսական տարբեր պայմաններում այս կամ այն լեզվի օգտագործումն է, այլ կերպ ասած, դա «թույլատրելի և առավել հնարավոր շփման միջոցի ընտրությունն է հաղորդակցության տվյալ իրավիճակում»⁷: Լեզվական վարքը, լինելով մարդու սոցիալական վարքի պարտադիր նախապայմաններից մեկը, բացահայտվում է լեզուների սոցիալ-ֆունկցիոնալ բաշխման կամ տվյալ հասարակության մեջ նրանց դրսևորումների ուսումնասիրությամբ: Հաղորդակցության լեզվի ընտրությունը պայմանավորված է լեզվական և արտալեզվական բնույթի մի շարք գործոնների ներգործությամբ՝ լեզուների տիրապետման հարաբերական աստիճանը, լեզուների գրական և մշակութային ավանդույթները, զգացմունքային վերաբերմունքը լեզվի նկատմամբ, էթնիկ միջավայրը, անհատի սեռատարիքային և սոցիալ-մասնագիտական դիրքը և այլն:

Ստորև քննվում է հաղորդակցության լեզվի ընտրության վրա հետևյալ երեք գործոնների ազդեցությունը.

ա) անհատի տարիքային պատկանելությունը, բ) անհատի սոցիալ-մասնագիտական պատկանելությունը, գ) լեզվին տիրապետելու հարաբերական աստիճանը:

Սեռատարիքային տեսանկյունից Երևանի բնակչության լեզվական վարքի քննումը ցույց է տալիս, որ սեռային և տարիքային խմբերի միջև տարբերությունները 2—3 տոկոսից ավելի չեն, ուստի և իրական հիմքեր չկան խոսելու որևէ օրինաչափությունների և ընդհանուր միտումների մասին:

4 С. И. Брук, М. Н. Губогло, Факторы распространения двуязычия у народов СССР (по материалам этносоциологических исследований, СЭ, 1975, № 5).

5 էթնոլեզվական պրոցեսների վրա տարաբնակեցման ազդեցությունը լավ հայտնի է (М. Н. Губогло, О влиянии расселения на языковые процессы, СЭ, 1969, № 5):

6 Հաշվումները կատարել ենք ըստ՝ «Население СССР...» աշխատության:

7 Л. Б. Никольский, Проблема связи языка и культуры, («Развитие языков и культур народов СССР в их взаимосвязи и взаимодействии», Уфа, 1976, с. 27—28).

Աղյուսակ 3

Երևանի բնակչության լեզվական վարքը
(ըստ հարցման նյութերի)*

Բնակչության խումբը	Ինչ լեզվով են խոսում			
	տանը		աշխատավայրում	
սեռատարիքային	հայ.	ռուս.	հայ.	ռուս.
18—29 տարեկան	87,6	11,9	77,8	21,8
աղամարդիկ	86,5	12,8	78,7	20,9
կանայք	88,8	11,0	77,0	22,6
30—49 տարեկան	88,8	10,6	80,6	18,8
աղամարդիկ	87,7	11,5	81,5	17,9
կանայք	90,0	9,7	79,8	19,6
50 և ավելի տարեկան բարձր	86,5	11,2	79,6	20,4
աղամարդիկ	85,4	12,1	80,5	19,5
կանայք	87,7	10,3	78,8	21,2

սոցիալ մասնադիտական

որակավորում չունեցող ֆիզ. աշխ.	97,9	0,7	95,5	3,5
կատարողներ				
միջին որակավորման ֆիզ. աշխ. կատարողներ	93,7	2,9	91,2	7,6
բարձր որակավորման ֆիզ. աշխ. կատարողներ	95,5	3,6	93,1	6,5
ծառայողներ	89,0	10,5	80,2	19,2
միջին օղակի ղեկավ. և մասնագետներ	83,1	15,3	75,2	24,8
բարձր օղակի ղեկավ. և մասնագետներ	79,4	20,3	67,4	32,4
ընդամենը	87,8	11,2	79,6	20,1

Լեզվական վարքն արտադրական ոլորտում և տնային հաղորդակցության մեջ համեմատելիս պարզվում է, որ դրանց միջև որոշակի կապ կա: Ինչպես երևում է, արտադրական հաղորդակցության լեզուն կարող է ազդել ընտանեկան հաղորդակցության լեզվի վրա այն դեպքում, երբ հակառակ երևույթը քիչ է հայտնաբերվում: Բազմամարդ կոլեկտիվում աշխատող անհատը քիչ հնարավորություններ ունի այնտեղ մտցնելու իր ընտանեկան հաղորդակցության լեզուն, եթե դրա համար չկան օբյեկտիվ պայմաններ (տվյալ ազգության աշխատողներ կամ որոշակի թվով մարդիկ, որոնք այդ լեզվին տիրապետում են ավելի լավ, քան մյուս լեզվին): Այլ է պատկերը ընտանեկան հաղորդակցության ոլորտում, ուր կոլեկտիվն անհամեմատ ավելի փոքր է:

Լեզվական վարքի դիտարկումն ըստ սոցիալ-մասնադիտական հատկանիշի ցույց է տալիս, որ անհատի սոցիալ-մասնադիտական պատկանելությանը և ուսման լեզվի տարածումը ուղիղ համեմատական են: Որքան բարձր է մասնագիտական որակավորումը, այնքան մեծ է ռուսերենի ֆունկցիան ընտանիքում և հատկապես արտադրության մեջ: Որպես բևեռային հակադիր խմբեր այստեղ հանդես են գալիս, մի կողմից, չորակավորված ֆիզիկական աշխատանքով զբաղվողները, մյուս կողմից, բարձրագույն օղակի մասնագետները: Երկրորդը նրանց միջև կազմում է 39,3 տոկոս: Աղյուսակ 1-ում միջին դիրք են գրավում ծառայողները, որոնք ռուսերենից օգտվում են ավելի հաճախ, քան ֆիզիկական աշխատանքով զբաղվողները:

* Աղյուսակում բաց են թողնված այն անձանց պատասխանները, որոնք նշել են այլ լեզու կամ չեն պատասխանել տվյալ հարցին. այդ պատճառով պատասխանների ընդհանուր թվում մարդ չի հասնում 100-ի:

Արտադրության ոլորտի լեզվական վարքում ռուսերենի համեմատաբար բարձր տարածված լինելը բացատրվում է մի շարք պատճառներով: Ամենից առաջ դա գիտատեխնիկական հեղափոխության զարգացումն է և մեր երկրի առանձին ազգային շրջանների միջև համախմբման (ինտեգրացիան) պրոցեսների հետագա ինտենսիվացումը: Շէլեկտրոնիկայի և ատոմային էներգետիկայի, ռադիոէլեկտրոնիկայի զարգացումը, արտադրության մեքենայացումը, ավտոմատացումը, տիեզերքի յուրացման նոր քայլերը՝ բոլոր այս երևույթները... նպաստում են երկլեզվության զարգացման հասարակական պահանջմունքների աճին⁸:

Էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքները վկայում են լեզվական վարքում ռուսաց լեզվի ֆունկցիոնալ բարձր ծանրաբեռնվածության մասին, հատկապես մտավորականության մեջ: Նախնական դիտարկումները ցույց են տալիս, որ այդ խմբում գոյություն ունի որոշակի շերտավորում: Միութենական նշանակության արտադրական հաստատություններում, գիտահետազոտական հիմնարկներում, մինիստրություններում և մյուս օրգաններում աշխատող ղեկավարները և բարձրագույն օղակի մասնագետները աշխատավայրում ուրիշներից ավելի հաճախ են օգտագործում ռուսերենը: Դա բացատրվում է մի շարք պատճառներով: Նախ, այդ աշխատողները, մեծ մասամբ ինժեներատեխնիկական կրթություն և բնագիտական մասնագիտացում ունենալով, բուհում սովորելիս՝ ամբողջ ինֆորմացիան, և բացառյալ դասախոսությունները, ստանում են ռուսերեն, քանզի մասնագիտական հայերեն գրականությունը և տեղամիևրանությունը անհրաժեշտ մակարդակի վրա չեն: Երկրորդ, նման ձեռնարկություններն ու հաստատությունները, սերտորեն կապված լինելով երկրի նմանատիպ ձեռնարկությունների հետ, դորժավարությունը վարում են հիմնականում ռուսերեն, մի հանգամանք, որ չի կարող շանդրադառնալ լեզվական վարքի վրա: Արտադրության ոլորտում ռուսաց լեզվի տարածմանը որոշակիորեն նպաստում են նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են ինժեներատեխնիկական անձնակազմի հաճախակի ուղևորությունները հանրապետությունից դուրս, միութենական մակարդակի խորհրդակցությունների և հանդիպումների կազմակերպումը, ինչպես նաև՝ տարբեր քաղաքների ու հանրապետությունների նմանատիպ ձեռնարկությունների միջև և այլ կարգի շփումները:

Նշված պատճառներից բացի, ռուսերենի տարածումը մտավորականության մեջ կարելի է բացատրել որոշ չափով նաև միութենական այլ հանրապետություններից ղեկավար և շալաուտան ձգվող միգրացիոն հոսանքով: Անցկացված հետազոտության նյութերը ցույց են տալիս, որ միութենական հանրապետություններից Երևան տեղափոխվածների մեջ մտավորականության տեսակարար կշիռը զգալիորեն գերազանցում է Երևանի համապատասխան ցուցանիշը: Եթե մտավոր աշխատանքով զբաղվողները կազմում են Երևանի բնակչության 56,5 տոկոսը, ապա վերոհիշյալ միգրանտների մեջ նրանք կազմում են 66,3 տոկոս: Իսկ բնակչության այդ խմբի մեջ, այլ էթնիկական միջավայրում երկար ապրելու հետևանքով, ազգամիջյան հաղորդակցության լեզվի իմացությունը զգալիորեն գերազանցում է հայերեն գրական լեզվի իմացությանն ու օգտագործմանը: Դրան հակառակ տեղական նշանակության ոչ բարդ տեխնիկական զինվածություն ունեցող ձեռնարկություններում, ուր ողջ արտադրությունն իրականացվում է հանրապետության ժողովրդական տնտեսության համակարգում, ինժեներատեխնիկական կազմի խոսակցական լեզվում հայերենի ֆունկցիոնալ ծանրաբեռնվածությունը գերազանցում է ռուսերենին: Ինչ վերաբերում է մշակութային և լուսավորական հաստատություններին,

⁸ М. С. Джунусов, Научно-техническая революция как фактор развития двуязычия (Научно-техническая революция и функционирование языков мира, М., 1977, с. 95).

ստեղծագործական միտվյուններին, հասարակագիտական պրոֆիլի դիտական և գիտահետազոտական ինստիտուտներին, ապա այստեղ ուսերենի տարածումը լեզվական վարքում զգալիորեն փոքր է: Սակայն այստեղ անհրաժեշտ է վերապահություն անել: Գիտության և մշակույթի այն ոլորտներում, որոնք կոչված են բավարարելու հանրապետության բնակչության հոգևոր պահանջմունքները և որոնցում հայ ժողովուրդը որոշակի ավանդույթներ ունի (գրականություն, պատմություն, կերպարվեստ, ճարտարապետություն, երաժշտություն և այլն) խոսակցական տիրապետող լեզուն հայերենն է: Իսկ այն հասարակագիտական հաստատություններում և ստեղծագործական միություններում, որոնք ուսումնասիրում են մշակույթի և կենցաղի միասնական ու ստանդարտացված ձևերը և հասարակական երևույթների ընդհանուր օրինաչափությունները (փիլիսոփայություն, տնտեսագիտություն) խոսակցական լեզվում ուսերենի գործածությունը համեմատաբար բարձր է: Ռուսաց լեզուն ավելի է տարածված նաև արվեստի համեմատաբար երիտասարդ ճյուղերում, որոնցում հանրապետությունը չի ունեցել ձևավորված ավանդույթներ ու մասնագետներ և նրանք պատրաստվել են այլ հանրապետություններում (կինեմատոգրաֆիա, հեռուստատեսություն):

Արտագրության ոլորտում ուսերենի տարածվածության աստիճանով հակադիր բևեռում են գտնվում ֆիզիկական աշխատանքով զբաղվողները: Այստեղ երեք որակավորման խմբերում էլ ուսերենի տարածումն աննշան է (3,5-ից մինչև 7,6 տոկոս): Սա բացատրվում է ուսաց լեզվի օգտագործման ոլորտի սահմանափակությամբ, միատարր էթնիկական միջավայրով, կրթության ավելի ցածր մակարդակով և շփման ավելի նեղ շրջանակով:

Ինչ վերաբերում է լեզվական վարքին ընտանեկան միջավայրում, ապա բոլոր սոցիալ-մասնագիտական խմբերում գերակշռում է հայերենը: Կենցաղում ուսերենը օգտագործվում է հիմնականում այն ընտանիքներում, որոնք կամ խառը ազգային կազմ ունեն, կամ ընտանիքի անդամների որոշ մասը ստացել է ուսական կրթություն: Վերջին դեպքում, եթե ուսական կրթություն ունեն միայն մեկ սերնդի ներկայացուցիչները (անկախ այն բանից ծնողները, թե երեխաները), ապա նրանք իրար հետ խոսում են ուսերեն, իսկ մյուսների հետ՝ հայերեն: Այդպիսի ընտանիքներում ուսերենը ավելի է գործածական դառնում միայն այն դեպքում, երբ ընտանիքի բոլոր անդամները սկսում են ուսերենին տիրապետել ավելի լավ, քան հայերենին: Ռուսերենը որպես ներընտանեկան հաղորդակցության լեզու առավել տարածված է բարձրագույն օղակի մասնագետների շրջանում՝ 20,3 տոկոս, որը կարելի է բացատրել ընտանիքի լեզվական վարքի վրա արտադրական ոլորտի լեզվի միջոցադրված ազդեցությամբ:

Լեզվական վարքի վրա լեզվական իրավասության ազդեցությունը քննելիս պարզվում է, որ վերջինս փաստորեն մեծ չափով որոշում է հաղորդակցության լեզվի ընտրությունը:

Առաջին հայացքից թվում է, թե հատուկ ուսումնասիրության կարիք չկա պարզելու համար, որ մարդիկ ավելի շատ խոսում են լավ տիրապետած լեզվով: Այդ ճիշտ է, սակայն, մյուս կողմից, առանց հատուկ ուսումնասիրության դժվար է պարզել, թե մարդկանց մոտ լեզվի իմացությունն ու օգտագործումը ժամանակի ընթացքում ինչպիսի փոփոխություններ է կրում: Մեր կարծիքով, այստեղ վճռական նշանակություն ունի դպրոցական ուսուցման լեզուն: Հարցման նյութից վկայում են, որ հայկական կրթություն ունեցող երեւանցիների բացարձակ մեծամասնությունը (94,8 տոկոս) ընտանիքում խոսում է հայերեն: Ի տարբերություն դրա, ուսական կրթություն ունեցող երեւանցիներն ընտանիքում հաղորդակցվում են հայերեն՝ 61,1 տոկոս և ուսերեն՝ 38,6 տոկոս: Վերջինիս մեծ մասնողները, որպես կանոն, գիտեն հայերեն գրել, կարդալ և խոսել:

Ինչ վերաբերում է արտադրական հաղորդակցության լեզվին, ապա երկու խմբերում էլ ուսաց լեզվի նշանակությունն ավելի բարձր է, քան ընտա-

Ա Ղ Ո Ւ Ս Ա Կ 2

Դպրոցական ուսուցման լեզվի ազդեցությունը լեզվական վարքի վրա

Դպրոցական կրթության լեզուն	Ինչ լեզվով են խոսում			
	տանը		աշխատավայրում	
	հայերեն	ռուսերեն	հայերեն	ռուսերեն
հայերեն	94,8	3,9	86,5	12,8
ռուսերեն	61,3	38,6	55,3	44,3
ընդամենը ⁹	87,4	11,6	79,5	19,9

նեկան միջավայրում: Արտադրության ոլորտում ռուսերենի լայն տարածումը պայմանավորող գործոնների մասին արդեն ասվեց վերևում: Ամենայն հավանականությամբ ինչ-որ չափով այդ պատճառների շարքումն է նաև զուտ լեզվաբանական գործոնը: Երևանի ժամանակակից, այսպես կոչված ժողովրդական խոսակցական լեզուն⁹, առայժմ իրենից չի ներկայացնում մի ամբողջական և մշակված համակարգ: Չնայած գրական արևելահայերենը ստեղծվել է Արարատյան դաշտի բարբառների հիման վրա, այնուամենայնիվ եկվոր բնակչությունը Երևան է բերում իր խոսակցական լեզուն: Մի դեպքում դա հայկական զանազան բարբառներն են, մյուս դեպքում՝ գրական լեզուն՝ լցված ժարգոնային արտահայտություններով և այլ լեզուներից չարդարացված փոխառություններով, որոնք հայոց գրական լեզուն, իր սեփական մեծ ներքին պաշարներն ունենալու պատճառով, չի ընդունում: Երկու դեպքում էլ հայերենի գոյությունն այդ ձևերը շարունակում են ապրել եկվորների մոտ և նկատելիորեն ազդում են երկրորդ սերնդի խոսակցական լեզվի վրա: Նշված հանգամանքը փաստորեն խանգարում է հաղորդակցման միջոցով գրական հայերենին տիրապետելու հնարավորությանը: Եթե արտադրության մեջ մտավորականության 31,8 տոկոսն է հաղորդակցվում ռուսերենով, ապա նույն խմբի ռուսական կրթություն ունեցողների մեջ այդ ցուցանիշը ավելի բարձր է: Մեր կարծիքով, ռուսական կրթությամբ մտավորականության մեջ արտադրության ոլորտում ռուսերենի գերակշռությունը բացատրվում է նաև գրական խոսակցական հայերենի անբավարար իմացությամբ: Թույլ տիրապետելով գրական լեզվին և արտադրության մեջ իրենց բարձր սոցիալական դիրքի պատճառով լցանկանալով դիմել ժողովրդական-խոսակցական լեզվին, մտավորականության այդ շերտը որպես արտադրական հաղորդակցության և հրապարակային ելույթների լեզու գերադասում է ռուսերենը, որն էլ իր հերթին սկսում է աղղել ընտանեկան լեզվի վերընտրության վրա:

Ամփոփելով, կարելի է հավաստել, որ հանրապետության հասարակական կյանքում հայերենի մեծ ֆունկցիոնալ նշանակության պահպանման հետ մեկտեղ բոլոր ոլորտներում տեղի է ունենում ռուսաց լեզվի գործածության աճ: Առաջադիմական այդ պրոցեսը բացատրվում է մեր ամբողջ երկրի տնտեսական և մշակութային կյանքի մերձեցմամբ և դրսևորվում է նախ և առաջ արտադրության ոլորտում: Անհատի լեզվական վարքը խստորեն համաարաբերակցվում է նրա սոցիալ-մասնագիտական դիրքի հետ, որը մեկ անգամ ևս վկայում է սոցիալ-մշակութային պրոցեսում երկրորդ լեզվի բարձր դիրք: Հարկ է նշել և այն, որ Հայաստանում տեղի է ունենում նաև օտար լեզուների իմացության աճ, որ բացատրվում է ժամանակակից դիտությանն ու տեխնիկային հաղորդակից լինելու և դրանց նվաճումներն օգտագործելու անհրաժեշտությամբ:

⁹ Ք. Ա. Ղարաբաղյան, Ակնարկներ ժամանակակից հայերեն խոսակցական լեզվի («Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն», Երևան, 1981):

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ЯЗЫКОВОГО ПОВЕДЕНИЯ

(По материалам этносоциологических исследований
населения г. Еревана)

АМБАРЦУМ ГАЛСТЯН

Резюме

Материалы этносоциологического обследования населения Еревана, проведенного отделом этносоциологии Института археологии и этнографии АН Армянской ССР, дают возможность рассматривать общие тенденции и закономерности речевого поведения различных половозрастных и социально-профессиональных групп. Материалы опроса свидетельствуют о том, что во всех сферах общественной жизни города вместе с сохранением высокого функционального значения армянского языка происходит рост двуязычия, в частности значения русского языка—языка межнационального общения народов СССР. Функциональная нагрузка русского языка более высока в производственной сфере, что объясняется интенсификацией интеграционных процессов между национальными регионами страны. Речевое поведение индивида тесно коррелируется с его социально-профессиональным статусом, что свидетельствует о высокой роли второго языка в социально-культурных процессах.